# ԵՐԳԻՇԱՆՔ՝ ՉՆԱՅԱՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԵՂ «ԳԼԱՎԼԻՏԻ» ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՀԱԿԱՌԱԿ ԴՐԱ

*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել պատմագիտության թեկնածուներ Համո Սուքիասյանի եւ Նարինե Երանոսյանի գիրքը՝ «Խորհրդային Հայաստանի երգիծական մամուլը 1920-ական թվականներին («Շեշտ», «Զուռնա», «Կարմիր մոծակ»)», Երեւան, «Էդիտ պրինտ» հրատ., 2018, 136 էջ։ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ։*

*Կարծում ենք՝ չափազանցություն չի լինի, եթե պնդենք, որ երգիծանքը գրական ամենաբարդ սեռերից է, ուր շատ երերուն, նուրբ ու զգայուն է ճաշակի ու անճաշակության, չափավորի ու չափն անցածի, հանդուրժելիի եւ անթույլատրելիի սահմանը։ Դեռեւս նախանցյալ հարյուրամյակում արեւմտահայ մտավորականները երգիծանքը շատ դիպուկ կերպով համեմատում էին բաղձալի դպրոցի հետ, որի դուռը փափագողներից քչերն են համարձակվում, սակավներն են հաջողում բանալ ու ներս մտնել, մինչդեռ, որքա՜ն հեշտ է այնտեղից դուրս վռնդվելը[1]։*

*Խորհրդային՝ միաբեւեռ, գրեթե զորանոցային երկրում կրկնակի դժվար էր այդ ասպարեզը, ինչպես ներկայացվող աշխատության հեղինակներն են վկայում. «...երգիծական բնույթի պարբերական հրատարակելու համար մեծ համբերություն եւ համարձակություն էր պահանջվում» (էջ 18)։ Ընդ սմին. «Որոշ բոլշեւիկ գործիչներ պնդում էին, որ խորհրդային իրականության մեջ երգիծանքն անհրաժեշտություն չէ եւ գոյության իրավունք չունի» (էջ 20)։ Լենինը, օրինակ, խնդիր էր դնում երգիծանքն իջեցնել կենցաղային, ամենօրյա հոգսերի մակարդակի, որ բնակչության ուշադրությունը շեղվի, որպեսզի ընթերցողը չսեւեռվի քաղաքական լուրջ հիմնախնդիրների վրա (էջ 22)։*

---

[1] Գ. Մադոյան, *Հակոբ Պարոնյան*, Երեւան, 1960, էջ 190։

*Այսպես՝ հրատարակության թույլտվությունը շնորհում էր «Հայգլավլիտը»՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի հետ համաձայնեցնելուց հետո, եւ աշալուրջ գրաքննիչի մամլիչն այնքան խիստ էր, որ ցանկության դեպքում, անգամ միանգամայն ճերմակ թղթի վրա, կարելի էր «հակախորհրդային քարոզչության նշաններ» հայտնաբերել եւ «չարակամությամբ խորհրդային կյանքի առանձին կողմերը ծաղրող» հանգամանքներ նկատել։ Եթե հավելենք նաեւ նյութական բազում, լուրջ դժվարությունները, որոնք կրնկակոխ ուղեկցում էին պարբերականների խմբագրակազմերին, ապա պատկերը կամբողջանա. Ի. հարյուրամյակի 20-ականներին արվել է ժամանակի համար գրեթե անհնարինը։ Աշխատության հեղինակների դիտարկումով հարաբերականորեն բարվոք են եղել ՏՆՔ (НЭП) տարիները (1923—1926 թթ.), երբ տնտեսական գործունեության որոշակի ազատություններ տրվեցին։*

*Այն, որ բոլշեւիկները սարսափում էին երգիծական ժանրից, վեր է կասկածից, այլապես ինչով կարելի բացատրել, որ 20-ականներին անդադար որոշումներ էին ընդունվում, եւ հետզհետե սեղմվում, ձգվում էր զսպաղակը։ 1927-ին ընդունված ՀամԿ(բ)Կ որոշմամբ քննադատվում էր այն պարբերականների մակարդակը, որոնց «մեծամասնությունը դեռ չի կարողացել դառնալ իրականացվող պետական շինարարության բացասական կողմերի եւ հին կարգերի մնացուկների, նախապաշարմունքների, քաղքենիության, ծայրահեղական տրամադրությունների դրսեւորման, աշխատավոր խավի առանձին շերտերում՝ հետամնացության դեմ ուղղված քաղաքական երգիծանքի օրգան» (էջ 21)։ Երգիծական պարբերականները մեղադրվում էին ընթերցող հանրությանը եւ նոր բուրժուազիայի ճաշակին հարմարվելու ճանապարհն ընտրելու մեջ։*

*Ուսումնասիրված պարբերականները երկու խմբագրի՝ Վահան Թոթովենցի եւ Էդուարդ Խոճիկի երախայրիքն են։ Երկու խմբագիր՝ արմատապես տարբեր ճակատագրերով։ Արեւմտյան Հայաստանի Խարբերդ նահանգի Մեզիրե քաղաքում ծնված, արմատներով ակնեցի Վահան Թոթովենցը, որ ամերիկյան կրթություն էր ստացել ու կարող էր հաստատվել այնտեղ, առանց վարանելու հայրենիք վերադարձավ Առաջին աշխարհամարտն սկսվելուն պես։ Իր երկրի ու ժողովրդի համար օրհասի պահին չէր կարող հեռվից պարզապես դիտորդ լինել...*

*Ցավոք, ստալինյան բռնատիրության ամենահաս ձեռքը 1936 թվականի հուլիսի 20-ին «դիպավ» նաեւ Թոթովենցին։ Գրողին կտտանքների*

*միջոցով պարտադրեցին ստորագրել «խոստովանություն» առ այն, որ հակահեղափոխական գործունեություն է ծավալել։ 1938-ի հուլիսի 18-ին կայացվեց դատավճիռը՝ գնդակահարություն, եւ իրականացվեց նույն օրը՝ առանց հապաղելու... Հապշտապ... Հապճեպ... Շտապում էին... Ո՞ւր...*

*Մտավորականի ոդիսականը բեկեց նաեւ նրա ընտանիքի անդամների ճակատագրերը։ Գրողի ստեղծագործական ժառանգությունը տեւական ժամանակ գոց, արգելված մնաց։ Միայն 1956-ի փետրվարին ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական կոլեգիան վավերացրեց նրա արդարացումը...*

*Էդուարդ Խոճիկյանը ծնունդով թիֆլիսցի էր։ Մոսկվայի՝ Արեւելքի աշխատավորների կոմունիստական համալսարանում կրթությունը կիսատ մնաց առողջական խնդիրների պատճառով։ 1922-ից հաստատվեց Երեւանում։ 1955 թվականին եղել է ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր, թեեւ անթաքույց աթեիստ էր ու նույնիսկ «Անաստված» թերթի պատասխանատու քարտուղարը լինելու «պատեհությունն» էր ունեցել։ 1961-ի նոյեմբերի 29-ին երգիծաբանը հրաժեշտ է տվել երկրային կյանքին։*

*Գրքի հեղինակները խմբագիրների կենսագրությունները լրացրել են արխիվային նյութերից քաղված նոր մանրամասներով, տարբեր աղբյուրների համադրության արդյունքում կատարել են էական ճշգրտումներ, շտկումներ։ Եւ եկել են եզրակացության. «Վահան Թոթովենցն ու Էդուարդ Խոճիկը հանդիսացել են ոչ միայն իրար շարունակող երգիծական պարբերականների հիմնադիր-խմբագիրներ, այլեւ մտերիմներ ու համախոհներ» (էջ 43)։*

*1923 թ. հունիսի 3-ին Վահան Թոթովենցի խմբագրությամբ լույս է տեսել Խորհրդային Հայաստանի անդրանիկ երգիծաթերթը, որի ամբողջական անվանումն էր՝ «Շեշտ. ժուրնալ ծաղր ու ծանակի, մարդկանց եւ ժամանակի»։ Պարբերականը փոքր էր եւ՛ ծավալով (4 էջ), եւ՛ տպաքանակով (լույս է տեսել երեք թողարկում՝ 400–500–400)։ Երրորդ համարում խմբագրակազմն ավետել է հեղինակներին (Լեռ Կամսար, Գուրգեն Մահարի («Գուրիս» ծածկանունով), Էդուարդ Խոճիկ, «Ալյոզան-Ֆան», «Վահրամ Անողոք») հոնորար տալու մասին։ Սակայն ոչ միայն հոնորար չտվեցին, այլեւ տպագրությունը շարունակություն չունեցավ։ Հենց սկզբից ակնհայտ էին թերթի առաջնահերթությունները։ Ինչպես սպասելի էր, քաղաքական երգիծանքի հիմնական թիրախներից էր ՀՅԴ-ն։ Իշխանությունից,*

*ըստ էության, նաեւ երկրից հեռացած կուսակցությունը դեռ որոշակի հեղինակություն ուներ, եւ դա լրջորեն անհանգստացնում էր (էջ 48)։*

*Անխնա երգիծանքի, անգամ ծաղրի թիրախ էին նաեւ լուսավորության, կրթության, արվեստի գործիչները՝ Տիգրան Հախումյան, Եղիշե Չարենց, Ազատ Վշտունի, լուսժողկոմ Ասքանազ Մռավյան, Ռոմանոս Մելիքյան, Յոլակ Խանզադյան։ Անշուշտ, այս փաղանգից չէր կարող դուրս մնալ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին։ Ազգային ինքնության գլխավոր վահանը թիրախավորելով՝ բոլշեւիկները ջանում էին նսեմացնել մեր հոգեւոր զորեղ կառույցի դերն ու նշանակությունը։ Այն համարում էին հնի մնացուկ, որը թունավորում է ժողովրդական զանգվածների գիտակցությունն ու խոչընդոտում կոմունիստական դաստիարակությանը (էջ 56)։*

*«Շեշտի» տպագրության դադարեցումից ամիսներ անց՝ 1924 թվականի մարտին, լույս տեսավ մի նոր պարբերական, որն ավելի կարճ կյանք էր ունենալու՝ մեկ թողարկում։ Խմբագիրը՝ Խոճիկը, ամիսներ շարունակ նախապատրաստական աշխատանք էր կատարել։ Պարբերականը բաղկացած էր 16 էջից, լույս էր տեսել 1000 օրինակով, օժտված էր գունավոր երգիծանկարներով։ Հեղինակների խումբը գրեթե նույնն էր՝ Դերենիկ Դեմիրճյան, Լեո Կամսար, Գուրգեն Մահարի («Գուրիս»), Աթաբեկ Խնկոյան («Յուվենալ»), «Հ», «Ս. Թ. Ալվոդ», «Տավուշցի»։ Պահպանվել էին նաեւ արդեն ավանդական դարձած թիրախները՝ դաշնակցական, կրթության ու մշակույթի գործիչներ, Տիգրան Հախումյան - Վահան Թոթովենց հակադրություն եւ, իհարկե, անպատճառ նաեւ հոգեւորականություն։ «Անաստված զուռնա» էջն ամբողջությամբ վերջիններին էր նվիրված։ Պարբերականն ուներ նաեւ «Գանգատների արկղ», որն ընթերցողների հետ հետադարձ կապի օրինակ պետք է դառնար։*

*Պարբերականի անչափ կարճ կյանքը կարող էր պայմանավորված լինել միջոցների սղությամբ, գուցե նաեւ Խոճիկի՝ 1924-ին Մոսկվա մեկնելն էր պատճառը։ Հեղինակները չեն բացառում նաեւ գրաքննության գործոնը (էջ 69)։*

*Մեկ տարի անց՝ 1925-ի ամռանը, Երեւան վերադառնալուն պես Խոճիկը ձեռնամուխ է լինում պարբերականի վերահրատարակմանը։ Սակայն «Երգիծաթերթի անվանումն առավելապես հիշեցնում էր հայկական մինչխորհրդային երգիծական մամուլը, նաեւ ՀՍԽՀ-ում ընդհատված «Զուռնայի» ավանդույթներին հետեւելու մասին։ Խորհրդային իրականությունում այս ամենը չէր կարող պարբերականի համար նպաստավոր*

հանգամանք դիտվել։ Խոճիկը, հաշվի առնելով այս իրողությունը, խորհրդային գրաքննության ծալքերում խուսանավելու հաջողված քայլ կատարեց. դա պարբերականի անվանման՝ «Զուռնայից» «Կարմիր մոծակի» անցումն էր։ Նա նպատակահարմար համարեց ընտրել կրկին հայ երգիծանքին հոգեհարազատ «Մոծակ» անվանումը՝ դրան հավելելով «կարմիր» պիտակը՝ իբրեւ խորհրդային կառավարության քաղաքականությանը հետեւելու թափանցիկ ակնարկ (էջ 71)։

1926 թվականի գարնանը դիմեցին «Հայգլավլիտ»՝ հրատարակության իրավունք ստանալու համար։ Խմբագիրները երկուսն էին լինելու՝ Արամայիս Երզնկյանն ու Էդուարդ Խոճիկը։ Նախատեսված երկշաբաթաթերթը լույս էր տեսնում անկանոն պարբերականությամբ։ Բացի խմբագիրներից՝ աշխատակցում էին Դերենիկ Դեմիրճյանը, Աշոտ Աթանասյանը («Սալ-Ման»), Գուրգեն Մահարին («Գուրիս»), Մուշեղ Բագրատունին («Փալանդուզ Մկո»), Հակոբ Աղաբաբը («Ակոփ Բեժանիչ»), Հրաչյա Աճառյանը («Մանուկ աղա»), Պարույր Հարությունյանը («Լուռ-Կամսուս»), Սարգիս Մելիքսեթյանը, «Ն. Անունյանը», «Վարդ Կամսարը», Թիֆլիսից՝ «Ճանճունին» եւ ուրիշներ։ Երգիծանկարների հեղինակները Միքայել Արուտչյանն ու Վահրամ Գայֆեճյանն էին։ Երկշաբաթաթերթը բաժանորդներ ուներ նաեւ արտերկրում։

Ակնհայտ է, որ նախորդ պարբերականներից փորձ էր կուտակվել, ու ավելի բազմազան եւ հագեցած էր դարձել գործունեությունը՝ գովազդ, հայտարարություններ, Խոճիկի համար ներշնչանքի ու պաշտամունքի աղբյուր հանդիսացող Հակոբ Պարոնյանի հիշատակին նվիրված գրական-գեղարվեստական երեկոների կազմակերպում, թատերական ներկայացումներ։ Ավելին. Էդուարդ Խոճիկը մտորում էր երգիծանքի թատրոն հիմնելու մասին՝ պարբերականին համանուն։ Տեսանելի ապագայում ծրագրում էին երգիծական թատերգության մրցույթ հայտարարել, տպագրել համաշխարհային սատիրայի գլուխգործոցների շարք՝ «Երգիծաբանական գրադարան»։ Մտորում էին նաեւ «Մամուլ» հրատարակչատան ստեղծման մասին, որը կիրականացներ ե՛ւ երկշաբաթաթերի, ե՛ւ գրական շարքի տպագրությունը, սեփական գործակալների միջոցով կսփռեր այն մարզերում։ Սա, այսօրվա չափանիշներով, պարբերականի գործունեությունը կազմակերպելու շատ գրագետ ծրագիր է։

Դարձյալ, արդեն կուտակած փորձի շնորհիվ, «Կարմիր մոծակը» փորձել է շրջանցել գրաքննությունը. «Այսպես՝ 1926 թ. հուլիսի 17-ին

*ՀԿ(բ)Կ կենտկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնին ուղղված «միանգամայն գաղտնի» նշագրումով զեկուցագրում Հայգլավլիտի նախագահ Սարգիս Մելիքսեթյանը, իր հատուկ ընդգծմամբ, «թյուրիմացություններից կանխորեն խուսափելու համար» տեղեկացնում էր, որ «Կարմիր մոծակ»-ի երրորդ համարի նկարների մակագրությունները տպագրվել են առանց իրենց իմացության» (էջ 87)։ Նույն զեկուցագրից պարզ է դառնում, որ «Հայգլավլիտի» կողմից հատուկ զգուշացվել են խմբագրակազմն ու տպարանի վարիչը։ Կենցաղային հոգսեր, ընկերային անհավասարություն. այս խնդիրներին անդրադառնում էին նուրբ ակնարկներով, Միքայել Արուտչյանի երգիծանկարներով, որոնք, սակայն, անհետեւանք չէին կարող մնալ։ Եւ պատժամիջոցները շատ չուշացան։ Առավել եւս, որ երկիրը սրընթաց մոտենում էր ստալինյան բռնատիրության շրջանին։ Հետազոտողները մանրակրկիտ վերլուծել են պարբերականը կասեցնելու պատճառներն ու հանգամանքները։ «Խորհրդահայ կյանքի բազմաշերտ թերությունները ծիծաղի հայելու միջով արտացոլելու առաքելությունը խնդրո առարկա երգիծաթերթերը հաջողությամբ են կատարել, ինչը եւ դարձավ նրանց կարճակյացության հիմնական պատճառը»,— ամփոփում են այս շատ հետաքրքիր ու կարեւոր ուսումնասիրության հեղինակները՝ Համո Սուքիասյանը եւ Նարինե Երանոսյանը։*

*Հավելենք, որ ուսումնասիրությունն օժտված է արխիվային նյութեր պարունակող հավելվածով, անձնանունների եւ տեղանունների ցանկով։*

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
*Բանասիրական գիտ. թեկնածու, ՀԱԱՀ*